ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

19 ապրիլի 2016թ. թիվ 113-Ա

## ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՈՒՄ 2016 ԹՎԱԿԱՆԻՆ «ՎԱՐՁԱՏՐՎՈՂ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՄԻՋՈՑՈՎ ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ» ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997թ. մայիսի 6-ի «Հայաստանի Հանրապետության մարզերում պետական կառավարման մասին» ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 12.02.2016թ. թիվ 45-Ա որոշմամբ հաստատված «Վարձատրվող հասարակական աշխատանքների կազմակերպման միջոցով գործազուրկների ժամանակավոր զբաղվածության ապահովման» ծրագրի՝ ըստ համայնքների ֆինանսական միջոցների բաշխման, ծրագրերի ուղղվածության, ծրագրերի իրականացման և ներկայացման ժամկետների ժամանակացույցը, հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզի Վանաձոր համայնքի ղեկավարի կողմից ներկայացված ծրագիրը և ՀՀ Լոռու մարզի զբաղվածության աջակցության մարզային հանձնաժողովի 19.04.2016թ. թիվ 3 նիստի արձանագրությունը /կցվում են/՝

Ո ր ո շ ու մ եմ.

Հաստատել Վանաձորի համայնքապետարանի կողմից ներկայացված «Խաղահրապարակների բարեկարգման աշխատանքներ» ծրագիրը՝ համաձայն հավելվածի:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ

2016թ. ապրիլի 19
ք.Վանաձոր